ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 61 Ա

„25„ 02 2025թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի պահանջներով, գարնանային հեղեղումների վտանգի նվազեցման, դրանց կանխարգելման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հեղեղավտանգ տարածքներն ուսումնասիրելու, համապատասխան համայնքների կողմից կանխարգելիչ աշխատանքները վերահսկելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն N1 հավելվածի:
2. Սահմանել ուսումնասիրման ենթակա հեղեղավտանգ տարածքները՝ համաձայն N2 հավելվածի:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) մինչև 2025 թվականի մարտի 10-ն ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հեղեղավտանգ տարածքները՝ համաձայն N2 հավելվածի և մինչև 2025 թվականի մարտի 15-ը ներկայացնել առաջարկություններ՝ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար.

2) առաջարկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հեղեղավտանգ գոտու համայնքների ղեկավարներին՝

ա. 2025 թվականի մարտի 1-ից իրականացնելու հեղեղատարների վտանգավոր հատվածներում կանխարգելիչ միջոցառումներ.

բ. հեղեղումների սպառնալիքի կամ վտանգի դեպքում համայնքի վտանգավոր տեղամասերում իրականացնել հնարավոր հետևանքների նվազեցման

միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում կազմակերպել բնակչության և նյութական արժեքների տարահանում.

3) հավաքագրել ու վերլուծել Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեներով այս ուղղությամբ իրականացված աշխատանքների և միջոցառումների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը և, ըստ անհրաժեշտության, դրանց մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչությանը և համապատասխան շահագրգիռ կառույցներին.

4) ապահովել սույն որոշման իրազեկումն ըստ առնչության:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ